(ՌՃԲ = 1653)

Յունվար ամիս օր Շաբաթ։

Եշի օր (6 Յունուար) տօն Ծննդեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Թ–ին ամսոյ օր Կիրակի․ Հոգևորտէրն ի Սուրբ Աստուածածնայ եկեղեցին էր և մեք ընդ նորա։ Ի ժամ սրբոյ պատարագին չարժ եղև։

Ուրբաթ օրս զԳէորքն մեր, որ էր հիւանդացեալ յոյժ, ըստ ջերմեռանդ խնդրոյ իւրն տարաք ի յոտս Հոգևորտիրին, և Հոգևորտէրն մի խաչ տւեալ նորա մասով և աւրհնեաց զնա։

Փետրուար ամիս օր Գշի։

Զ–ին օր Կիրակի․ մեռոնթափէք արաւ Հոգևորտէրն, այսինքն բաժանեաց մեռոն Գ եկեղեցւոյս, և Գ աւագիրիցունք զգեստաւորեալ և Հոգևորտէրն ժամարար, և ի ժամանակ ողջունին ետ նոցա, և նոցա մի մի արծաթեղէն աման ըմբռնեալ առին, որ էին աւագիրիցունք՝ Տէր Ոհանն Աստուածածնի, Տէր Աւետիսն Սուրբ Նիկողոսու, Տէր Մարտիրոս Հարազատն իմ Սուրբ Սարգսի։ Այս եղեւ ի Սուրբ Նիկողայոսու եկեղեցին։

Ամսոյ ԺԹ–իս[1]) օր Շաբաթ մանզուլ արարին ըզ-Սուլէյման աղայ էնկիչէրոցն, որ ելեալ էր սա ըսկիզբն ի պալատէ Թագաւորին։ Սա զՀայոց զգեստն պատճառելով գանէր, և ելեալ ի Ներսէն կրկին, անուն Մուստաֆա, այս յոյժ առաջեցոյց զչարութիւնն․ ջանայր զգանեալսն ի հաւատոյ դարձուցանել, որ յետ մանզուլ լինելոյն փեսայացաւ Մուրատ փաշային․ այս այն է։

1) Ի–իս․